

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 29

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

05.11.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Վ.Ջաղինյանը, Գ.Տոնոյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը, Մ.Սարգսյանը, Կ.Խառատյանը, ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա. Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ս.Սարուխանյանին, Ա.Հովսեփյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման

վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բեջանյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Կազմակերպել քննարկումներ սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների հետ, պարզել պատճառները, ցուցաբերել անհրաժեշտ օժանդակություն:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ըստ ոլորտների ուսումնասիրել մարզպետարանի կայքէջը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ դրա թարմացման և նորացման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Ս.Սարուխանյանին, մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Համատեղ քննարկում կազմակերպել Ախթալայի համայնքի ղեկավարի և շահագրգիռ անձանց մասնակցությամբ Ախթալայի «Մորզանի տուն - թանգարանի» ստեղծման հետ կապված հարցով և ներկայացնել առաջարկություններ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ Գ.Տոնոյանին, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների բաժնի պետ Ա. Եղիազարյանին՝

Լոռի Բերդ համայնքի ղեկավարի և դպրոցի տնօրենի հետ քննարկել պարտուսից դուրս մնացած երեխաների հարցը և հնարավոր լուծումների վերաբերյալ ներկայացնել առաջարկություն:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների բաժնի պետ Ա. Եղիազարյանին՝

ա) Անհրաժեշտ հսկողություն սահմանել իրականացվող տնայցերի ընթացքում աշխատակիցների կողմից հարգալից վերաբերմունք դրսևորելու և օրենսդրության պահանջները պահպանելու ուղղությամբ:

բ) Ուսումնասիրել և 1 շաբաթյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն խնամատար ընտանիքների և որդեգրել ցանկացող ընտանիքների վերաբերյալ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝

Համայնքներում Ավտոգազալցակայանների և լիցքավորման կետերի տարածքներում տեղակայված հանրային զուգարաններին ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ իրականացվող հսկողության շրջանակներում կազմակերպել քննարկումներ և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության բաժնի պետ Վ.Ջաղինյանին՝

Սույն թվականի նոյեմբերի 10-ին նախատեսված Վանաձորի «Բժշկական կենտրոնի» բացման նպատակով իրականացնել նախապատրաստական աշխատանքներ և ներկայացնել առաջարկություններ:

 Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ